IVES TERNON, *Les Arméniens, histoire d'un génocide*, Paris, 1977, 315 p.

Իվ ՏԵՐՆՈՆ, Հայերը, մի ցեղասպանության պատմություն, Փարիզ, 1977, 315 էջ։

Աշխարհի բազմաթիվ լեզուներով մեծ քանակությամբ արժեքավոր ուսումնասիրություններ են հրատարակվել Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի զանգվածային շարդերի և մասնավորապես 1915 թ. թուրքական կառավարող շրջանների կազմակերպած ու իրականացրած մեծ եղեռնի վերաբերյալ։ Սակայն, դրանով հանդերձ, տակավին չունենք հայ ժողովրդի պատմության այդ արյունոտ էջը լուսաբանող ամբողջական ուսումնասիրություն։ Ֆրանսիացի գիտնական Իվ Տերնոնի գրախոսվող աշխատությունը դալիս է մասամբ լրացնելու այդ բացը։

Իվ Տերնոնն իր առջև խնդիր չի դրել լոկ շարադրելու հայ ժողովրդի ցեղասպանության արյունոտ պատմությունը։ Նա առավել կարևոր է համարում ճշմարտությունը հասցնել համաշխարհային հասարակական կարծիքին։ «Այն, որ 1915 թ. հայ ժողովուրդը զոհ գնաց,— գրում է նա,— անժխտելի փաստ է։ Սակայն լայն հասարակայնությունն իրազեկ չէ այդ իրողությանը։ Լավագույն դեպքում նա մի տարտամ գաղափար ունի այդ մասին» (էջ 9)։

Անողոք քննադատության ենթարկելով սուլթան Աբդուլ Համիդ II-ի և երիտթուրքերի շովինիստական քաղաքականությունն Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների, մասնավորապես, հայ ժողովրդի նկատմամբ և ցնցող փաստերով ներկայացնելով եղեռնի ահասարսուռ տեսարանները ողջ կայսրության տարածքում, Իվ Տերնոնը ձգտում է ոչ թե «հին ատելությունները վերստին բորբոքել, այլ վերականգնել եղելությունները իրենց պատմական իրականության մեջ» (էջ 6) և դրանով իսկ, ինչպես ինքն է գրում, նպաստել երկու ժողովուրդների փոխըմբռնմանը և նրանց միջև բնականոն հարաբերությունների հաստատմանը։ «Իմ ամենաջերմ մաղթանքն է,— գրում է նա,— որ այս գիրքը... կարողանա նպաստել երկու ժողովուրդների՝ հայերի և թուրքերի միջև վաթսուն տարի առաջ խզված կապերի վերահաստատմանը» (էջ 6)։

Հեղինակի խորին համոզմամբ՝ այդ ուղղությամբ, բնականաբար, առաջին քայլը պետք է կատարվի թուրք ժողովրդի կողմից։ Որպես առաջին քայլ՝ թուրք ժողովուրդը և թուրքական կառավարությունը պետք է ընդունեն 1915 թ. հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանության փաստը։ «Վաթսուն տարի է, ինչ թուրքական կառավարությունները ոչ միայն համառում են ընդունել, որ երիտասարդ թուրքերը (որոնց մյուս քաղաքական սխալները, ի դեպ, նրանք դատապարտել են) բնաջնջեցին Թուրքիայի հայերին, այլև ոչ ոքի իրավունք չեն տալիս հաստատելու այդ իրողությունը։ 1915 թ. ցեղասպանության վերաբերյալ յուրաքանչյուր ակնարկություն թուրքերի կողմից ընկալվում է որպես անձնական վիրավորանք» (էջ 8)։ Սակայն, քանի որ փաստերը համառ են, իսկ ցեղասպանությունը անջնջելի է հիշողությունից, «թուրքերը պարտավոր են մի օր վերաբանալ հայկական թղթածրարը և այն քննել ավելի սառնարյունությամբ և օբյեկտիվությամբ» (էջ 313)։

Իվ Տերնոնի աշխատությունն ընդգրկում է հայ ժողովրդի արևմտյան հատվածի ցեղասպանության պատմությունը XIX դ. կեսերից մինչև 1922 թ.։ Այն բաղկացած է երկու բաժնից։ Առաջինում, որը կրում է «Հայկական հարցը» խորագիրը, քննվում է մինչև 1908 թ. Արևմտյան Հայաստանում պարբերաբար կրկնվող կոտորածների պատմությունը։ Երկրորդ բաժնում («Երիտթուրքերը») ներկայացված է հայ ժողովրդի ցեղասպանության վերջին փուլը, երբ Արևմտյան Հայաստանը և Թուրքիան դատարկվեցին հայ ազգաբնակչությունից։

Հանրագումարի բերելով հայ ժողովրդի ցեղասպանության վերաբերյալ տարալեզու մեծաքանակ վավերագրերի և գրականության նյութերը, Իվ Տերնոնը հանգամանորեն ցույց է տալիս, թե ինչո՞ւ և ինչպե՞ս ի կատար ածվեց XX դ. առաջին մեծ ոճիրը՝ ուղղված հնագույն

և մարդկային քաղաքակրթությանն ու առաջընթացին զգալի նպաստ բերած մի ժողովրդի դեմ։ Նրա եզրահանգումները համոզիչ կերպով հերքում են պատմության թուրք կեղծարարների այն պնդումը, թե «գենոցիդ» բառն անիմաստ է, որ ավելի ճիշտ կլիներ խոսել «հիրադարձություններին զոհ գնացածների մասին» (էջ 8)։

Գրախոսվող աշխատության հեղինակը նկատում է, որ թուրք պատմաբանները միտումնավոր կերպով կեղծում են պատմությունը։ «Հայկական հարցի վերաբերյալ նրանց աշխատությունները այն աստիճան նենգափոխված են,— շեշտում է Իվ Տերնոնը,— որ անօգտագործելի են» (էջ 313)։ Պատասխանելով հայ ժողովրդի եղեռնի պատմությունը նենգափոխողներին, Իվ Տերնոնը գրում է, որ «կարծեցյալ գենոցիդը» իրոք գենոցիդ էր... և մենք գործ ունենք ոչ թե մի հնացած, թաղված հարցի հետ, այլ մի արդիական, հազարավոր հայերի վերաբերող հարցի հետ, մի վեճի հետ, որը տակավին կարգավորված չէ» (էջ 9)։

Խոսելով XIX դ. 50—60-ական թվականներին Արևմտյան Հայաստանում օսմանյան կառավարության վարած քաղաքականության մասին, Իվ Տերնոնը համոզիչ փաստերով ցույց է տալիս, որ արդեն այդ շրջանում թուրքական կառավարող շրջանների մոտ հասունացել էր «հայերից ազատվելու գաղափարը» (էջ 52—53)։ Հեղինակը հերքում է նաև թուրքական պատմագրության կողմից բազմիցս հոլովված այն կեղծ դրույթը, որ, իբր, Թուրքիայում հայերի համընդհանուր ապստամբությունը կանխելու համար անհրաժեշտություն է զգացվել դիմելու որոշ կանխարգելիչ միջոցների։ Այդ առթիվ Իվ Տերնոնը գրում է. «իրար հաջորդող թուրքական կառավարությունները մինչև այսօր հայկական ապստամբության այդ պատրվակը օգտագործել են բոլոր շարդերն արդարացնելու համար» (էջ 77)։ Նա ցույց է տալիս, որ թուրքական կառավարող շրջանները հայաջինջ ծրագրերը իրականացնելիս աշխատում էին «հայերի նկատմամբ ճնշումը ուժեղացնելու միջոցով նրանց մղել ըմբոստության և աշխարհին հավատացնելով, որ բոլոր կառավարությունների նման իրենց պարտականությունն են համարում կարգը վերականգնել երկրում... ապստամբության այդ պատրվակը հաջողությամբ օգտագործել մի ամբողջ ժողովուրդ բնաջնջելու համար» (էջ 90)։

Իվ Տերնոնը հանգամանորեն կանգ է առնում 1894 թ. Սասունում, 1895 թ. Տրապիզոնի, Էրզրումի, Բաղեշի, Վանի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սվազի, Հալեպի, Ադանայի և Անդորայի վիլայեթներում, 1896 թ. Կ. Պոլսում, Վանում, Քիլիսում և այլ վայրերում տեղի ունեցած հայկական կոտորածների վրա, որոնք խլեցին ավելի քան 300.000 զոհ։ Նա ապացուցված է համարում, որ դրանք «կազմակերպված, նախապատրաստված և կոորդինացված էին սուլթան Աբդուլ Համիդ II-ի արքունիքի կողմից» (էջ 113)։ Նա նկատում է, որ. ա) Աննշան բացառությամբ կոտորածները տեղի ունեցան բոլոր այն վայրերում, որտեղ մեծ տերությունները պահանջում էին կատարել բարենորոգումներ, բ) Հայերի կոտորածները ծրագրված էին տարիներ առաջ, գ) Հրահանգ էր տրված կոտորել միայն հայերին։ Այդ է վկայում նաև այն փաստը, որ, օրինակ, Թուրքիայում բնակվող մեծ թվով հույները այդ կոտորածների ժամանակ նկատելի թվով զոհեր չտվեցին, դ) Բոլոր վայրերում օգտագործվել է շարդերի «միևնույն տեխնիկան», կոտորածները սկսվել են «միևնույն ժամին» և այլն։

Իվ Տերնոնը խստորեն քննադատում է եվրոպական մեծ պետությունների հանցավոր անտարբերությունը հայերի զանգվածային շարդերի նկատմամբ և նրանց փարիսեցիական ու կեղծավոր քաղաքականությունը։ Նա նկատում է, որ Աբդուլ Համիդ II-ը 1894—1896 թթ. հայերին կոտորելու իր ծրագիրն իրականացրեց, երբ համոզվեց, որ եվրոպական տերությունների միջամտությունը չի կարող բողոքներից, բանավոր սպառնալիքներից և զոհերի նկատմամբ համակրանք արտահայտող ուղերձներից այն կողմ անցնել (էջ 115)։ «Չնայած Հայաստանի կոտորածներից սարսափած հասարակական կարծիքի ճնշմանը, անգլիական և ֆրանսիական կառավարությունները գերադասեցին շարունակել Օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելու քաղաքականությունը և անլուծելի հայտարարեցին հայկական հարցը։ Մինչդեռ, միակ իրավացի անելիքը մեծ պետությունների կոլեկտիվ միջամտությունն էր այն ձևով, ինչ ձևով որ հնարավոր դարձավ Բալկանյան պետությունների ազատագրությունը կամ երաշխիքների ստացումը Լիբանանում» (էջ 115—116)։

Իվ Տերնոնի աշխատության երկրորդ բաժնում համակողմանիորեն ներկայացված է 1915 թ. եղեռնի պատմությունը։ Պատասխանելով այն հարցին, թե ինչո՞ւ երիտթուրքերը ծրագրեցին և իրականացրին հայերի ցեղասպանությունը, նա գրում է. «Հայերը վտանգ էին ներկայացնում նոր Թուրքիայի համար, քանի որ կանգնած էին Անատոլիայի ասիական սահմանների և պանթուրքիզմի ապագա նվաճումների ճանապարհի վրա» (էջ 170)։ «Այն րոպեից, երբ թուրքական նացիոնալիզմը միաձուլվեց պանթուրքիզմի համար մղվող պայքարի հետ, նրա հայացքը

«ուղղվեց դեպի Անդրկովկաս, որը հանկարծ թվացել էր թուրքական «կենսական տարածության» նախադուռը» (էջ 171)։ Այն հարցադրմանը, թե երիտասարդ թուրքերը իրոք հավատո՞ւմ էին, որ հայերին բնաջնջելով իրենք ճանապարհ են բաց անում պանթուրքիզմի համար, Իվ Տերնոնը տալիս է կտրուկ պատասխան՝ «անկասկած» (էջ 170)։

Գրքում իրավացիորեն նշվում է, որ դեռևս 1909 թ. իթթիհադին լրջորեն անհանգստացնում էր հայկական հարցը։ Այդ ժամանակ նա դեռևս չէր մտածում այն լուծել հայերին բնաջնջելու ճանապարհով, սակայն միևնույն ժամանակ չէր ցանկանում պարտադրել, որ թուրքերը հայ ազգաբնակչության նկատմամբ ցուցաբերեն լիբերալիզմ։ Սակայն 1909 թ. Կիլիկիայի շարդից հետո իթթիհադի պարագլուխներից մեկը՝ դոկտոր Նազիմը, հայտարարում է. «Օսմանյան կայսրությունը պետք է միմիայն թուրքական լինի։ Օտար տարրերի առկայությունը կարող է պատրվակ ծառայել եվրոպական միջամտության համար։ Դրանց անհրաժեշտ է զենքի ուժով թուրքացնել» (էջ 179—180)։

Այսպիսով, Իվ Տերնոնը 1909 թ. Կիլիկիայի կոտորածը համարում է կամուրջ՝ համիդյան շարդերի և երիտթուրքական գենոցիդի միջև։

Գրախոսվող աշխատության հեղինակը փաստերի կուռ տրամաբանությամբ ապացուցում է, որ 1915 թ. եղեռնը կանխամտածված ոճիր էր, որը ծրագրվեց, կազմակերպվեց և փայլ առ փայլ իրականացվեց երիտթուրքերի կողմից։ Մասնավորապես նա փաստեր է բերում այն մասին, որ առաջին համաշխարհային պատերազմը տակավին չէր սկսվել, երբ երիտթուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ այնպիսի կազմակերպությունների ստեղծմանը, որոնք պետք է իրականացնեին հայերի աքսորն ու բնաջնջումը։ 1914 թ. օգոստոսին թուրքական ոստիկանությանը զուգահեռ ստեղծվեց մի հատուկ կազմակերպություն (Թեշկիլաթ-ի-Մահսուսե), որը հանդիսացավ, ինչպես անցյալում Համիդիե գնդերը, բնաջնջման մեքենայի առաջին մասը։ Այն կյանքի կոչվեց իթթիհադի կենտրոնական կոմիտեի կողմից՝ ընդհանուր զինակոչի հրամանից մի քանի օր հետո։ Այդ կազմակերպության կենտրոնը Կ. Պոլիսն էր, իսկ ղեկավարներն էին դոկտոր Նազիմը, Բեհաեդդին Շաքիրը և ուրիշներ։ Նրա դրոշի ներքո հավաքագրվեցին «քրեական հանցագործներ, հատկապես մահապարտներ, որոնց դուրս էին բերել կայսրության տարբեր բանտերից» (էջ 201—202)։ Բացի այդ, կյանքի կոչվեցին նաև երկու այլ կազմակերպություններ՝ այսպես կոչված «Տեղահանության հանձնաժողովը» և «Լքյալ գույքերի վարչությունը»։ Առաջինն իրականացնելու էր հայերի աքսորը դեպի անապատները, իսկ երկրորդի պարտականությունն էր բռնագրավել և վաճառել հայերի շարժական և անշարժ գույքը։

Այսպիսով, նախատեսվում էր զուգակցել օպերացիայի քաղաքական և տնտեսական շահերը։ «Հայերի շարժական և անշարժ գույքի, ինչպես և բանկերում պահ դրած նրանց գումարների և ակցիաների սեփականատեր էր դառնում կառավարությունը։ Իսկ աքսորվածների մոտ եղած առձեռն փողը և նրանցից կողոպտված կապոցները կազմում էին ոճրագործների վարձը» (էջ 215)։

Ընդհանրացնելով երիտթուրքերի կիրառած ցեղասպանության մեթոդը, Իվ Տերնոնը գրում է. «Հրամայական պահանջ էր ապստամբության ամեն մի հնարավորությունից հայերին զրկելը։ Դրանից էր կախված օպերացիայի հաջողությունը։ Աքսորվելու օրը հայերը պետք է զարթնեին առանց ղեկավարի, առանց զինվորի, առանց զենքի» (էջ 214)։

Հեղինակը հանգամանորեն նկարագրում է, թե յուրաքանչյուր վիլայեթում, յուրաքանչյուր վայրում ինչպես գործադրվեց աքսորի ու շարդի հրամանը։ Նա գրում է. «Ամեն ինչ վկայում է մի կենտրոնական հրամանատարության գոյության մասին, որը ստանում էր տեղեկագրերը և փոխանցում համապատասխան դիրեկտիվները։ Նրա նստավայրը գտնվում էր Կ. Պոլսում, ներքին գործերի մինիստրի կաբինետում, որտեղից էլ բնաջնջման գործի իսկական ուղեղը՝ Թալաաթը, հատուկ ու որոշ հրամաններ էր արձակում... Իրադարձությունների վիլայեթ առ վիլայեթ նկարագրությունը փարատում է ամեն կասկած կանխորոք պատրաստված (բնաջնջման—Վ. Բ., Հ. Թ.) ծրագրի և այն գործադրելու կոչված մի բարդ բյուրոկրատիայի գոյության մասին» (էջ 234)։

Իվ Տերնոնը փորձել է ճշտել նաև զոհերի թվաքանակը։ Այդ առթիվ նա եզրակացնում է, որ թվաքանակը լինի 1.200.000 թե 1.500.000, «միևնույն է, անհետացել է մի ժողովուրդ» (էջ 275)։

Խոսելով մեծ պետությունների, մասնավորապես կայզերական Գերմանիայի պատասխանատվության հարցի մասին, հեղինակը ճիշտ է եզրակացնում, որ այդ ոճրի նախաձեռնողը, իրականացնողն ու պատասխանատուն երիտթուրքերն էին։ Սակայն չպիտի մոռանալ, որ կայ-

զերական Գերմանիայի հակահայկական դիրքորոշումը նպաստեց երիտթուրքական մարդակուլ պլանների իրականացմանը։

Ինչ վերաբերում է Անտանտի պետությունների դիրքորոշմանը, Իվ Տերնոնը գրում է, որ նրանք ոչինչ չարեցին հայերին օգնելու համար, բավարարվելով միայն ոճիրը և ոճրագործներին դատապարտելով։ «Նրանք այնպես վարվեցին,— գրում է հեղինակը.— կարծես այս ժողովրդի անհետացումը կարգավորում էր նաև իրենց գործերը» (էջ 295)։

Իվ Տերնոնը շոշափում է նաև հայ քաղաքական կազմակերպությունների գործունեության և ֆիդայական շարժումների վերաբերյալ մի շարք հարցեր, երբեմն զարգացնելով անընդունելի տեսակետներ։ Նա բավական հանգամանորեն նկարագրում է Վանի ինքնապաշտպանությունը, ցույց տալով, որ համընդհանուր հուսալքության ու մասսայական ահաբեկման պայմաններում Վանի հայ բնակչությունը իր մեջ ուժ ու կորով գտավ դիմագրելու թուրք չարդարարներին։ Սակայն, դժբախտաբար, թռուցիկ կերպով է կանգ առնում Ուրֆայի, Մուսա-Դաղի և այլ վայրերի հերոսական ինքնապաշտպանության պատմության վրա։

Սակայն նման կարգի թերությունները ստվեր չեն գցում հիշյալ արժեքավոր աշխատության վրա։

Իվ Տերնոնի աշխատությունը գրված է հայերեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, մասամբ էլ թուրքերեն աղբյուրների և առհասարակ մասնագիտական գրականության պատշաճ իմացությամբ։ Նա ոչ միայն օգտագործել է հայ ժողովրդի ցեղասպանության պատմությունը նվիրված գրեթե բոլոր կարևոր աշխատությունները, այլև գիտական շրջանառության մեջ է դրել զգալի քանակությամբ նոր նյութեր՝ քաղված եվրոպական մամուլից և ֆրանսիական արխիվներից։

Փաստական այսօրինակ ատաղձով Իվ Տերնոնի աշխատությունը կարևոր ներդրում է հայկական գենոցիդի պատմության ուսումնասիրման բնագավառում։

ՎԱՀԱՆ ԲԱՅԱՐՈՒՐԴՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՓՈՒԶՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու